Հաստատում եմ՝

Ռուս-Հայկական համալսարանի

Գիտության գծով պրոռեկտոր փ.գ.դ., պրոֆեսոր

Պ.Ս. Ավետիսյան

12.05.2026 թ.

ԿԱՐԾԻՔ

(առաջատար կազմակերպության)

ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի **«Գործադիր իշխանության գործառնման փոխակերպումը ՀՀ քաղաքական համակարգում»** թեմայով ատենախոսության վերաբերյալ:

Հաստատվել է

Ռուս-Հայկական համալսարանի Կ.Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոնի 2026թ.-ի մայիսի 11-ի նիստում: Նիստին մասնակցում էին փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ Հ.Լ. Մարգսյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վ.Ս. Դավթյանը, քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Փ. Ենգոյանը, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Ս. Մանուկյանը, իրավ. գիտ. դոկտոր, դոցենտ Ա.Ռ. Հարությունյանը, քաղ. գիտ. թեկնածու Ն.Ա. Դունամալյանը, քաղ. գիտ. թեկնածու ավագ դասախոս Ն.Ի. Մարգարյանը, ավագ դասախոս Մ.Լ. Հարությունյանը, ավագ դասախոս Ի.Ա. Քարամյանը:

Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի «Գործադիր իշխանության գործառնման փոխակերպումը ՀՀ քաղաքական համակարգում» թեմայով ներկայացված ատենախոսական աշխատանքը համապատասխանում է ժամանակակից գիտական օրակարգին: Ընտրված թեմայի արդիականությունն ու նշանակությունը՝ ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հարթություններում, անվիճելի են: Հետազոտությունն իրավացիորեն համադրում է գործադիր իշխանության ինստիտուցիոնալ վերլուծությունը՝ պետական կառավարման արդյունավետության համաժամանակյա չափումների հետ՝ հաշվի առնելով հետխորհրդային երկրների վերակառուցման առանձնահատկությունները և Հայաստանի Հանրապետության ինստիտուցիոնալ զարգացման ուրույն ուղեգիծը:

Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ աշխատանքում գործադիր իշխանությունը հանդես է գալիս ոչ թե որպես սոսկ կառուցվածքային միավոր, այլ՝ որպես պետական-քաղաքական համակարգի շարժիչ ուժ, որի գործառման որակից էապես կախված է հանրային քաղաքականության արդյունավետությունը: Հեղինակը հիմնավոր կերպով ցույց է տալիս, որ ՀՀ-ում 2000-2024թթ. իրականացված վարչական բարեփոխումները բացառապես ինստիտուցիոնալ ձևափոխման տրամաբանությամբ չեն ընթացել, այլ ուղեկցվել են կառավարման մոդելների հայեցակարգային փոխակերպումով՝ ավանդական բյուրոկրատական մոդելից նոր հանրային կառավարում (New Public Management) պարադիգմայով դեպի լավ կառավարում (Good Governance) կողմնորոշումը:

Հետազոտության նպատակը հստակ սահմանված է՝ բացահայտել և վերլուծել ՀՀ-ում գործադիր իշխանության ինստիտուտի, ռազմավարական և օպերացիոն բաղադրիչների փոխազդեցությունը՝ պետական-քաղաքական կառավարման արդյունավետության համատեքստում, և մշակել գործադիր իշխանության արդյունավետության բարձրացման ուղիները: Աշխատանքում առաջադրված խնդիրները՝ տեսական պատկերացումների ճագումնաբանության ուսումնասիրումից մինչև գնահատման էմպիրիկ չափման մեթոդիկայի մշակումը, ապահովում են աշխատանքի ինքնաբավ տրամաբանական ամբողջականությունը:

Հետազոտության նպատակը հաջողությամբ իրականացվել է հեղինակի կողմից ընտրված համակցված մեթոդաբանական գործիքակազմի շնորհիվ: Կիրառվել է ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակները ընդգրկող մեթոդական եռաչափ կաղապար, որը հնարավորություն է տվել քննել գործադիր իշխանության գործառման բարեփոխումները՝ ինչպես կառուցվածքային, այնպես էլ ֆունկցիոնալ արդյունավետության տեսանկյունից: Հիշարժան է New Public Management և Good Governance մոտեցումների հնարավորությունների ու սահմանափակումների համեմատական վերլուծությունը՝ հատկապես ՀՀ պայմաններում դրանց կիրառելիության դիտանկյունից: Հեղինակը հմտորեն օգտագործում է միջազգային գնահատման գործիքակազմը՝ World Bank Governance Indicators-ը, V-Dem Democracy Index-ը, Transparency International Corruption Perceptions Index-ը և Quality of Government Institute-ի տվյալները՝ զուգակցելով դրանք ՀՀ նորմատիվ-իրավական ակտերի, կառավարության ռազմավարական ծրագրերի և հայեցակարգերի վերլուծությանը:

Ատենախոսությունն ունի լավ կառուցված տրամաբանական ձև, որը բխում է հետազոտության խնդիրների հաջորդական լուծման անհրաժեշտությունից: Առաջին գլխում՝ «Գործադիր իշխանության ինստիտուտի և դրա մասին տեսական պատկերացումների ճագումնաբանությունը», հեղինակը ներկայացնում է ինստիտուտի տեսական ակունքները՝ ընդգրկելով դասական և ժամանակակից քաղաքագիտական հայեցակարգերը: Այս հատվածի առավելությունն այն է, որ չի սահմանափակվում զուտ տեսական ակնարկով, այլ ցուցադրում է, թե ինչպես են այդ հայեցակարգերը արտացոլվել ժամանակակից գործադիր ինստիտուտի էվոլյուցիայի մեջ:

Երկրորդ գլխում՝ «Գործադիր իշխանության արդյունավետության ուսումնասիրման տեսական հիմքերը», հիմնավոր կերպով ներկայացված է արդյունավետության քաղաքագիտական ուսումնասիրման մեթոդաբանությունը, ինչպես նաև պետական կառավարման արդյունավետության մասին ժամանակակից պատկերացումները: Դրականորեն պետք է ընդգծել «արդյունավետ կառավարում» հասկացության հայեցակարգային քննարկումը՝

տնտեսագիտությունից մինչև «լավ կառավարում» (good governance) մոտեցումներով: Հեղինակն իրավացիորեն հակվում է դեպի այն դիրքորոշումը, ըստ որի՝ արդյունավետությունը պետք է գնահատվի ոչ միայն «մուտք-ելք» տնտեսական հարաբերակցությամբ, այլև ժողովրդավարական լեգիտիմության, ինստիտուցիոնալ կայունության և սոցիալ-տնտեսական զարգացման շրջանակներում:

Երրորդ գլխում՝ «Պետական և քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացումը ՀՀ-ում», հեղինակը ներկայացնում է ՀՀ պետական-քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացման ռազմավարական մոտեցումները, օպերացիոնալ գործիքակազմը և կոնկրետ ուղիները: Այս գլուխը կարելի է դիտարկել իբրև ատենախոսության բուն կիրառական ներդրումը: Հատկապես արժեքավոր են գործադիր իշխանության ինստիտուտների ինստիտուցիոնալ, ռազմավարական և օպերացիոնալ մակարդակների վերաբերյալ առաջարկվող կառուցողական ուղեցույցները՝ ուղղված ՀՀ կառավարման համակարգի պայմաններում հատկապես հաջող պրակտիկաների ներդրմանը:

Ատենախոսության գիտական նորույթը կազմված է մի շարք բովանդակալի դրույթներով, որոնք իրապես հարստացնում են քաղաքագիտական գիտելիքը: Մասնավորապես, հեղինակը մշակել է գործադիր իշխանության արդյունավետության գնահատման տեսական-մեթոդաբանական շրջանակ՝ ներինստիտուցիոնալ և համակարգային մոտեցումների սինթեզի հիման վրա, ինչը ատենախոսության վերլուծական ապարատի առավելագույն կարևոր ձեռքբերումներից է: Մշակվել է գործադիր իշխանության արդյունավետության չափման բազմաչափանիշ էմպիրիկ մեթոդաբանություն: Էմպիրիկորեն բացահայտվել և վերլուծվել են գործադիր իշխանության արդյունավետության և քաղաքական համակարգի կառուցվածքային բնութագրերի միջև բազմաստիճան կապերը: Համապարփակ վերլուծվել են Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանության բարեփոխումների էվոլյուցիան՝ ավանդական

բյուրոկրատական համակարգից դեպի Նոր հանրային կառավարում (New Public Management) և լավ կառավարում (Good Governance) մոդելները:

Աշխատանքի կիրառական նշանակությունն այն է, որ ուսումնասիրման արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման համակարգի մարմինների, քաղաքագետների, օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների կողմից: Արդյունքները նպաստում են գործադիր իշխանության արդյունավետության բարձրացման ռազմավարական պլանավորման ու օպերացիոնալ գործիքակազմի կատարելագործման աշխատանքներին և կարող են ուղեցույց ծառայել հետագա բարեփոխումների գործում: Հետազոտության արդյունքները կարող են նաև կիրառվել քաղաքագիտության, պետական կառավարման, քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ առարկաների դասավանդման ընթացքում՝ բուհական մակարդակով:

Հաշվի առնելով կատարված զգալի գիտական աշխատանքը և դրա գնահատումը, այդուհանդերձ ատենախոսության նկատմամբ հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտողություններ, մասնավորապես.

1. 1.2 ենթակետում, որտեղ քննարկվում է գործադիր իշխանության մասին հայեցակարգային պատկերացումների զարգացումը, հետաքրքիր կլիներ ավելի ընդլայնված անդրադարձ լիներ նաև ոչ-արևմտյան քաղաքագիտական դպրոցների՝ մասնավորապես ասիական և եվրասիական կառավարման մոդելների տեսական մոտեցումներին: Դա կարող էր լրացուցիչ համեմատական շեշտադրում հաղորդել Հայաստանի Հանրապետության դեպքի վերլուծությանը:

2. Հեղինակը՝ որպես համեմատական հենք, ընտրել է Արևելյան գործընկերության երկու երկիր (Վրաստան և Մոլդովա), ինչը, անկասկած, արդարացված ընտրություն է: Այնուամենայնիվ, համեմատական վերլուծությունը կարող էր ավելի համապարփակ լինել՝ ավելացնելով նաև մերձբալթյան երկրների (օրինակ՝ Էստոնիա) կամ Կենտրոնական Ասիայի որևէ պետության (օրինակ՝ Ղազախստան) փորձը՝ էլեկտրոնային կառավարման ոլորտում:

3. 3.3 ենթակետում, որտեղ ներկայացվում են ՀՀ-ում պետական-քաղաքական կառավարման արդյունավետության բարձրացման ուղիները, նպատակահարմար

կլիներ առավել ծավալուն անդրադարձ կատարել քաղաքացիական հասարակության, ոչ-պետական դերակատարների և մասնավոր հատվածի մասնակցության ներուժին՝ հատկապես multi-stakeholder governance մոտեցման շրջանակներում: Նպատակահարմար կլիներ առանձնահատուկ ուշադրություն դարձնել «implementation gap»-ին՝ ռազմավարական ծրագրերի և դրանց փաստացի իրականացման միջև առկա բացին, ինչը կամրապնդեր արդեն իսկ ձևակերպված դիտարկումները:

4. Աշխատանքում կիրառված միջազգային ինդեքսների՝ World Bank Governance Indicators-ի, V-Dem-ի և Transparency International-ի տվյալների օգտագործումը ընդհանուր առմամբ հիմնավորված է, սակայն որոշ դեպքերում կարելի էր հավելյալ անդրադառնալ նաև դրանց մեթոդաբանական առանձնահատկություններին և փոքր պետությունների գնահատման հետ կապված սահմանափակումներին:

5. Աշխատանքում օպերացիոնալ գործիքակազմի վերլուծությունն իրականացված է բարձր մակարդակով, սակայն ՀՀ-ում էլեկտրոնային կառավարման կոնկրետ հարթակների (e-gov.am, e-draft.am, e-request.am և այլն) աշխատանքի առանձին դեպքերի (case studies) վերլուծությունը կամրապնդեր ստացված ընդհանուր եզրակացությունները:

Վերոնշյալ դիտողությունները, սակայն, չեն նսեմացնում աշխատանքի գիտա-ակադեմիական և կիրառական արժեքը: Հեղինակի հրատարակված գիտական հոդվածներում ներկայացված են ատենախոսության հիմնական դրույթները, որոնք ունեն հիմնավորված գիտագործնական նշանակություն:

Թեմայի արդիականությունը և հիմնավորված եզրահանգումները, առաջարկությունները, ինչպես նաև ուսումնասիրության համար ընտրված շրջանակներն ու արդյունքները հնարավորություն են տալիս փաստելու, որ Մարինա Ալեքսանդրի Մարգարյանի «Գործադիր իշխանության գործառնման փոխակերպումը ՀՀ քաղաքական համակարգում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին և այն երաշխավորում է հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»

մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ռուս-Հայկական համալսարանի
Կ.Ա. Միրումյանի անվան քաղաքագիտության ամբիոնի վարիչ
փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ.Լ.Սարգսյան

փ.գ.թ., դոցենտ Հ.Լ.Սարգսյանի ստորագրությունը հաստատում եմ

Ռուս-Հայկական համալսարանի
Գիտական քարտուղար
Բանասիրական գիտությունների թեկնածու Ռ.Ս. Կասաբաբովա